ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի ղեկավարին է դիմել Վահրամ Ժորայի Ասատրյանը Նաիրի համայնքի Քասախ գյուղում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 07-065-0295-0114 կադաստրային ծածկագրի 0,24775 հա հողամասից 0,02698 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրելու խնդրանքով: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-301 դրական եզրակացությունը՝ ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է փոփոխել հողամասի նպատակային նշանակությունը և արտացոլել այն Քասախ գյուղի գլխավոր հատակագծում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Վահրամ Ժորայի Ասատրյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման ընդունումը Նաիրի համայնքի 2025 թվականի բյուջեում ենթադրում է 1811923 դրամ եկամուտների ավելացում:

Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի

պարտականությունները կատարող՝ Ա. Մովսեսյան